ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկության թույլատրելի և արգելված վայրերը սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությամբ արված դիտողությունների և առաջարկությունների

1. Արդարադատության նախարարություն	07.01.2025թ. №/01/27.2/317-2025 գրության
«Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկության թույլատրելի և արգելված վայրերը սահմանելու մասին» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք, որ Նախագծի 3-րդ կետով որոշումն ուժի մեջ մտնելու ժամկետը անհրաժեշտ է վերանայել (նախատեսել ավելի ուշ ժամկետ)՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները համաձայն որի՝ *Նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը:*	Ընդունվել է.